Վահան Տէրեան, ինչպէ՞ս երգեմ յիշատակը քո.
Թող լուռ փռուի հիմա իմ դէմ անլոյս երեկոյ,
Սրտիս վրայ իջնի թող մութ մի ամպի քուլա,
Քամին բերէ թող մահուան բոթ ու անձրեւը լայ...[70]

Վ. Տէրեանի մահուանից յետոյ անցել են 100 տարիներ։ Այդ մէկ դարը ոչ միայն Տէրեանին չհեռացրեց մեզնից, այլեւ աւելի հարազատեցրեց, ցոյց տուեց նրա պոեզիայի անանց հմայքը, ցոյց տուեց, որ այն մեր նախորդների, մեզ ու յաւերժի համար է սահմանուած։ Նրա պոեզիայի լաւագոյն մասը միշտ այժմէական ու անթառամ է մնալու եւ յաւերժ ապրելու է մեր ժողովրդի յոյզերի ու մտքերի աշխարհում, հոգ չէ թէ նա ասել էր. «Թող ինձ չյիշեն, թող ինձ մոռանան»։

ՆՇԱՆԱՒՈՐ ՄԱՐԴՈՑ ԿԵԱՆՔԷՆ

Օր մը Մարք Թուէյն իր երբեմնի դասընկերէն նամակատան պահարան մը կը ստանայ, առանց դրոշմաթուղթի։ Դրամը վճարելէ ետք, ան կը բանայ պահարանը եւ կը կարդայ «Սիրելի բարեկամ, ջերմ ողջոյններ քեզի, հիմա Շիքակօ կ՚ապրիմ։ Հին բարեկամդ. Ճէքսըն»։

Մի քանի օրեր ետք Ճէքսըն կը ստանայ 2-3 քիլօ կշռող ծրար մը, որուն համար պէտք էր վճարէր։ Ան բանալով ծրարը, ահագին թուղթերու մէջ մեծկակ քարի կտոր մը կը գտնէ, երկտողով մը, ուր գրուած էր. «Սիրելի բարեկամ, երբ նամակէդ իմացայ, որ լաւ ես եւ երջանիկ, այս քարը ինկաւ սիրտէս։ Բարեկամդ՝ Թուէյն»։

* * *

Անգլիացի գէր գրող մը, երեկոյ մը, թատրոնի նախասրահը կը հանդիպի Պ. Շոուին, եւ կ՚ըսէ.

- Երթալով կը նիհարնաք, ձեզ տեսնողը կը կարծէ Անգլիա սով կայ։

Շո ժպտալով կը պատասխանէ.

- Իսկ ձեզ ալ տեսնելով մարդիկ պիտի ըսեն թէ դուք էք սովին պատճառը։

[70] Նոյն տեղում, 514: